քէն առաջ մարմինի վրայ տարածելով չեն թողուր որ անոր աղը մնայ հոն և կը ստիպեն որ այն այլ հալի երթայ գոլորշիանալով։

Իւղագեղձիկներու բերանները կը բացուին մազարմատներու քովիկը և հոն կը թափեն իրենց իւղը, որով՝ ո՛չ միայն մարմինը օծանելով անոր վերնամաշկային մակերևոյթը սահուն կ՚ընեն, այլ և կը կակուղցնեն մորթը, և կակուղ դիւրաթեք կ՚ընեն նաև անոր վրայ բուսած մազերը, որոնց պաշտօնն է, մարմնի դգայութեան փափկութիւնը հովանաւորել, պահպանել։

Դիտական աշխարհի երկարամեայ փորձերովը հաստատուած ճշմարտութիւն մ՚է այսօր, թէ մարդկային մարմինը՝ թոյն չինելու, թոյն արտաղքելու կատարեալ գործարան մ՚է, և եթէ չա՛տ անգամ այդ թոյներէն չենք մնասուիր կամ ազդուիր, պատճառն այն է՝ որ մեր մարմինը միանգամայն օժտուած է այնպիսի՛ գործարաններով, որոնք հետզհետէ կը մաքրասրբեն զայն՝ արտաղրուած ապականաբար թոյներէն։

ԲԺ. Վ. Ց. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՏԱՐԻՔ ԿԱՆԱՆՑ

Տագնապալից տարիք (âge critique) ըսելով կը հասկցուի կիներու կեանքին այն շրջանը, որ կը սկսի դաշտանին վերջին կանոնաւոր բոլորումէն մինչև այն ժամանակը, երբ դաշտանը և անոր հետ յաճախ մայրութիւնը, վերջնապէս կը դադրին։

Բարեխառն երկիրներու մէջ տագնապալից տարիքը միջին հաշուով կը սկսի 46 տարեկանին, երբեմն 42—45 և երբեմն 50ի մօտերը։ Բացառաբար աւելի կանուխ՝ 30—40 տարեկանին, կամ աւելի ուշ՝ 60 տարեկանին։

Կան սխտարանական պատճառներ, որոնք դաշտանը կը դադրեցնեն 30 տարեկան հասակէն աւելի առաջ. այսպէս օրինակ՝ սրտի գործարանական հիւանդութիւնները, շաքարախտը, պալարախտը (տիպէրկիւլոզ), դալկախտը (տեսակ մը անարիւնութիւն, քլորոզ), ձուարաններու կարգ մը հիւանդութիւնները եւայլն։ Այս պարագաներուն մէջ դաշտանին դադարումը վերոյիշեալ հիւանդութեանց սխտանիշերէն մէկն է և ոչ թէ «տագնապալի տարիքին» հետևանքը։

Եթէ, ինչ ինչ սխտային պատճառներով, հարկ տեսնուի ձուա-

բանները վիրաբուժական գործողութեամբ հանել, այն ատեն դաշտանը վերջնապէս կը դադրի:

Դաշտանի դադարը տեղի կ'ունենայ երբեմն մէկ անգամէն, յաճախ յամրաբար, անկանոն քիչ-շատ երկար շրջանէ մը յետոյ:

Երբ կինը առողջ է և ջղային դրութիւնը հաւասարակշիռ, դաշտանին դադարումը ընդհանրապէս անբնական անհանդստութիւններ չի տար։ Հետզհետէ ամսագլուխը կը քիչնայ, իր պայմանաժամերը քիչ-քիչ իրարմէ կը հեռանան, ամիսներով կ'ուշանան, յետոյ դաշտանը վերջին երևան կուգայ, սակայն միշտ անկանոն կերպով ամիսներ ուշանալով, որմէ ետքը վերջնապէս կը դադրի։ Այսպէս կ'ըլլայ բնական և ամէնէն անվնաս դաշտանադադարը։

Սակայն՝ այդ տագնապալի շրջանը միշտ բնականոն չ'անցնիր։ Յաճախ կինը կը տառապի, արեան շրջանի և ջղային դրութեան խանգարումներ կ'ունենայ, գլխի արիւնախռնում յառաջ կուգայ, որով մէկէն ի մէկ դէմքը կը կարմրի և կինը անհաճոյ տաքութիւն կը զգայ երեսն ի վեր, ականջները կը բզզան, գլխապտոյտ և սրտի բաբախումներ կ'ունենայ։ Ասկէ զատ մարսողական գործարաններն ալ լուրջ կերպով կը խանգարուին, սրտի մինչ այդ պահուած հիւանդութիւններ երևան կ'ելլեն և երբեմն ալ մտային խանգարումներ կը պատահին։ Կիներուն այս ճգնաժամային տարիքի բոլորումը երբեմն աւելի լուրջ ախտանիշեր և ախտեր կրնայ յառաջ բերել։ Ամէնէն դժնդակն է քաղցկեղը (cancer) որ ընդհանրապէս երևան կուգայ արգանդին և երբեմն ստինքին մէջ։ Դաշտանի շրջանին և մանաւանդ անկէ վերջ որևէ անբնականոն հոսում (արիւնի կամ թարախի), արգանդի ուռի, մանաւանդ քաղցկեղի, ակզբնաւորութեան մը կասկածելի ախտանիշն է։

Ամէն կին, 45-46 տարեկանին հասնելուն պէս, պարտի առողջապահական կանոններուն ճշդիւտ հետևիլ, կաթէ և բանջարեղէնէ անուղղառնել, ոգելից ըմպելիներէն զգուշանալ, հոգեկան վիշտերէ հեռու կենալ և ի պահանջել հարկին, իր վրայ ունէ անբնական ախտանիշ նշմարելուն պէս, անյապաղ բժշկին խորհուրդներուն և խնամքներուն դիմել։

(Սոֆիա) ԲԺ. Ն. ԹԱԳԻՈՐԵԱՆ

«ԲՈՒԺԱՆՔ»Ը ԿԸ ՀԵՏԼՔՐՔՐԷ ՔԵԶ... ՈՒ Կ'ՕԳՏՈՒԻՍ ԱՆԿԷ...

Ուրեմն գոհ պիտի ըլլաս ամէն ամիս կանոնաւորաբար ստանալով զայն։ Մի վարանիր և անմիջապէս դրկէ բաժնեգինդ: